**Նոտարական ակտի կոդ:** 551-20190325-119-3672231
**Նոտարական ակտի գաղտնագիր:** PKOBZU

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ
/քաղաք Երևան, Էրեբունի Արցախի պողոտա 14/156, հեռ.010-43-09-49/

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
երկու հազար տասնինը թվականի մարտի քսանյոթին

Մի կողմից **«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,
հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ ՇԱՀԱՄԻՐՅԱՆՆԵՐԻ / 22,
գրանցման համար՝269.110.01588, ՀՎՀՀ՝ 02216066,
ի դեմս տնօրեն՝ **ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ,**
ծնված՝ 23/05/1960թ-ին, ՀԾՀ՝ 3305600085,
անձնագիր՝ AK0320452, տրված՝ 069-ի կողմից, 23/06/2009թ-ին,
հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Փ., 38 Տ
որի կողմից որպես լիազորված անձ, համաձայն լիազորագրի, տրված 26/03/2019թ. (երկու հազար տասնինը թվականի մարտի քսանվեցին), գործում է **ԼԵՎՈՆ ՌՈՒԲԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ**,
ծնված՝ 16/01/1990թ-ին, ՀԾՀ՝ 2601900539,
նույնականացման քարտ՝ 007171630, տրված՝ 003-ի կողմից, 22/03/2016թ-ին,
հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ Փ., 47/2 Շ, 23ԲՆ
**այսուհետ ,,Նվիրաբերող,,**

մյուս կողմից՝**«ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ»** Պետական մարմինը,
հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ / 13Ա,
գրանցման համար՝286.184.1026904, ՀՎՀՀ՝ 02555816,
ի դեմս գլխավոր քարտուղար՝ **ՍԱՄՍՈՆ ԹԵԼՄԱՆԻ ՉԱՏԻԿՅԱՆԻ**,
ծնված՝ 24/02/1972թ-ին, ՀԾՀ՝ 3402720063,
անձնագիր՝ AK0518022, տրված՝ 012-ի կողմից, 02/06/2010թ-ին,
հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՄԱՐԳԱՐՅԱՆ Փ., 22 Շ, 3ԲՆ
**այսուհետ՝ ,,Նվիրաբերություն ստացող,,**
կնքեցին անշարժ գույքի և սարքավորումների նվիրաբերության սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նվիրաբերողը անհատույց, որպես նվիրաբերություն, Նվիրաբերություն ստացողին է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող **Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց փողոց, 47/2 (քառասունյոթ կոտորակ երկու) շենք, թիվ 106 (հարյուր վեց) հասցեում գտնվող անշարժ գույքը**, որը բաղկացած է՝
-արտադրական սեփականություն՝ Պոմպակայան-31,5քմ (երեսունմեկ ամբողջ հինգ տասնորդական քմ)
-բնակավայրերի նշանակության, ընդհանուր բաժնային սեփական. հողամաս-0,209509հա (զրո ամբողջ երկու հարյուր ինը ամբողջ հինգ հարյուր ինը միլիոներորդական հա) մակերեսից, (հողամասի ծածկագիրը՝ 01-011-0384-0021, շինության ծածկագիրը՝ 01-011-0384-0021-001-106) և տարածքի ներսում գտնվող սարքավորումները, (այսուհետ տարածքը և սարքավորումները միասին՝ Գույք),
1.2. Նվիրաբերություն ստացողը պարտավորվում է Գույքն օգտագործել ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Բագրատունյաց փողոց, թիվ 47/2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարման իրականացման նպատակով:

## 2.Հավաստումներ և երաշխիքներ

2.1. Պայմանագրի

պատկանում է Նվիրաբերողին, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ,,Երևան,, տարածքային ստորաբաժանման ,,Շենգավիթ,, (1) սպասարկման գրասենյակի կողմից 25/12/2018թ. (երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի քսանհինգին) տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25122018-01-0161 վկայականով, գաղտնաբառ՝ MZBIZGUHLA5P:

2.2. Պայմանագրի ստորագրման պահի դրությամբ Գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, ինչը հավաստվում է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ,,Երևան,, տարածքային ստորաբաժանման ,,Շենգավիթ-1,, սպասարկման գրասենյակի կողմից 22/03/2019թ. (երկու հազար տասնինը թվականի մարտի քսաներկուսին) տրված ՄS-22032019-01-0346 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքով, գաղտնաբառ՝ DXCLIBAD81FR:

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝ Սեփականատիրոջ բաժնեմասը 0,209509 հա (զրո ամբողջ երկու հարյուր ինը հազար հինգ հարյուր ինը միլիոներորդական հա) հողամասի և շենքի 2793,04 հա (երկու հազար յոթ հարյուր իննսուներեք ամբողջ չորս հարյուրերորդական քմ) ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ կազմում է՝3150/1164669**

**2.3. Նվիրաբերողը հավաստում և երաշխավորում է, որ.**

ա. Պայմանագրի ստորագրման պահի դրությամբ Գույքը վաճառված, նվիրված, խոստացված կամ գրավադրված չէ, արգելանքի կամ կալանքի տակ չէ, ազատ է երրորդ անձանց իրավունքներից կամ այլ ծանրաբեռնումներից,

բ. Գույքը չի հանդիսանում վեճի առարկա, և Նվիրաբերողին հայտնի չեն որևէ ընթացիկ կամ սպառնացող վարույթներ կամ այլ հանգամանքներ, որոնք կարող են բացասաբար ազդել Նվիրաբերողի կողմից Պայմանագրի կատարման հնարավորության վրա:

**2.4. Նվիրաբերություն ստացողը հավաստում է, որ.**

ա. անձամբ ծանոթացել է Գույքին, իրեն հայտնի չէ որևէ ընթացիկ կամ սպառնացող վարույթներ կամ այլ հանգամանքներ, որոնք կարող են բացասաբար ազդել իր կողմից Պայմանագրի կատարման հնարավորության վրա:

**3. Գույքի նկատմամբ իրավունքների ծագումը**

3.1. Գույքի նկատմամբ Նվիրաբերություն ստացողի սեփականության իրավունքը ծագում է լիազոր պետական մարմնում այն գրանցելու պահից:

**4. Գույքի հանձնում-ընդունումը**

4.1. Սույն պայմանագրի նոտարական վավերացման պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Նվիրաբերողը պարտավորվում է հանձնման-ընդունման ակտով Նվիրաբերություն ստացողին հանձնել պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը:

**5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1.Եթե Նվիրաբերություն ստացողը նվիրաբերության առարկան օգտագործել է Նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան, ապա Նվիրաբերողը կամ նրա իրավահաջորդն իրավունք ունի պահանջել վերացնելու նվիրաբերությունը:

5.2.Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված գույքի օգտագործումը Նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն Նվիրաբերողի համաձայնությամբ, իսկ Նվիրաբերողի իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով:

5.3. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5.4. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, ապա Կողմերը միմյանց հանդեպ պատասխանատվություն են կրում միայն իրական վնասների մասով:

**6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)**

6.1.Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու համար Կողմն ազատվում է պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը ողջամտորեն չէր կարող կանխատեսվել կամ կանխարգելվել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

Կողմերը պետք է պայմանավորվածություն ձեռք բերեն Պայմանագիրը շարունակելու նպատակահարմարության վերաբերյալ: Փոխադարձ պայմանավորվածություն ձեռք չբերելու դեպքում յուրաքանչյուր Կողմ կարող է պահանջել լուծել Պայմանագիրը:

**7. Պայմանագրի գործողությունը**

7.1.Պայմանագրի բոլոր դրույթները, որոնք անմիջականորեն կապված չեն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հետ, ուժի մեջ են մտնում Պայմանագրի նոտարական կարգով վավերացման պահից:

7.2.Պայմանագրի դրույթները, որոնք անմիջականորեն կապված են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման և դադարման հետ, ուժի մեջ են մտնում անշարժ գույքի նկատմամբ Նվիրաբերություն ստացողի սեփականության իրավունքը լիազոր պետական մարմնում գրանցվելու պահից:

7.3.Պայմանագիրը գործում է մինչև Պայմանագրով Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:

**8. Կիրառվող օրենքը և վեճերի կարգավորման կարգը**

8.1. Պայմանագիրը մեկնաբանվում և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավասու դատարանների քննությանը:

**9. Եզրափակիչ դրույթներ**

9.1. Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ Պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման, 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում:

9.2.Պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում Կողմերի միջև ձևակերպվում է գրավոր և վավերացվում նոտարական կարգով:

9.3. Պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող իրավունքների պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Նվիրաբերողը:

9.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է Պայմանագիրը վավերացրած նոտարի մոտ և մեկ օրինակը ներկայացվում է լիազոր պետական մարմնին՝ Պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման համար:

**Կողմերի ստորագրությունները**

Նվիրաբերող՝ ,,Գրանդ Տոբակո,, ՍՊԸ, լիազորված անձ

________________________________________

Նվիրաբերություն ստացող՝ **«ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ»** Պետական մարմնի

գլխավոր քարտուղար՝

________________________________________

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
երկու հազար տասնինը թվականի մարտի քսանյոթին
սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության «Երևան» նոտարական տարածքի նոտար՝ ՄԱՐԻՆԵ ՄԱՐԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ/տերերի/ իրավունքները, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման [illegible]
պետական միասնական [illegible]

մարմնի համապատասխան ստորաբաժանումում:
Գրանցված է գրանցամատյան No 1563 ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Մարինե Մարատի Սարգսյան